բաւոր է» Անդրկովկասի անկախութեան յայտարարութիւնը, որից յետոյ Ռէուֆ բէյը վճռական կերպով յայտարարեց, որ կովկասեան հանրապետութեան անկախութեան ճանաչումը հնարաւոր կը լինի միայն մի առանձին կէտով Անդրկովկասի և Թիւրքիոյ միջև կնքելիք դաշնագրի մէջ, իսկ նման դաշնագիր կնքելու համար բանակցութիւնները կարող են սկսուել ա՛յն ժամանակ միայն, երբ անդրկ. պատուիրակութիւնը հրաժարուի Բաթումի, Կարսի և Արդահանի սանջակների վրա ունեցած յաւակնութիւններից: Իսկ ինչ որ վերաբերում է Անատոլիայի ժողովուրդների ինքնորոշման և Թիւրքահայաստանի ինքնավարութեան հարցին, այդ Թիւրքական ներքին խնդիր է և չի կարող քննութեան առնուել. օսմանեան պատուիրակութիւնը թոյլ չի տայ միջամտելու իր ներքին գործերին:

Սրա վրա երկու պատուիրակութիւնները որոշեցին դիմել իրենց կառավարութիւններին նոր հրահանգներ ստանալու համար, և բանակցութիւնները մի առ ժամանակ կանգ առին:

Ստեղծած փակուղուց դուրս գալու նպատակով անդրկովկասեան պատուիրակութիւնը իր անդամներից մի քանիսին, որոնց մէջ և Քաջազնունին, ուղարկեց Թիֆլիս՝ բերանացի զեկուցում տալու և նոր հրահանգներ բերելու համար: Միեւնոյն ժամանակ պատուիրակութիւնը հարց յարուցեց, որ նախագահին տուեն արտակարգ լիազօրութիւններ՝ ազատ և ինքնուրոյն քայլեր անելու համար: Այս պահանջը հիմնաւորւում էր նրանով, որ պատուիրակութիւնը շատ բազմանդամ է, դանդաղաշարժ և դժուարացնում է գործը: Իրօք, պատճառը ուրիշ էր. այդ միջոցով ուզում էին առաջը առնել այն դրութեան, որ Թիւրքերը միշտ իրազեկ էին անդրկ. պատուիրակութեան մէջ անցած-դարձածներին, և այդ բացատրւում էր նրանով, որ ազրբէջանցի պատուիրակները գաղտնի կերպով տեղեկութիւններ էին տանում նրանց: Յետագային յայտնի դարձաւ, որ այդ «արտակարգ լիազօրութիւնները» հարկաւոր են եղել և վրացիների համար:

Սէյմը իր մարտ 13 նիստում քննութեան առաւ Տրապիզոնից բերուած տեղեկութիւնները և Չխենկելիին «արտակարգ լիազօրութիւններ» տալու առաջարկը և ընդունեց հետեւեալ բանաձեւը. «Լսելով զեկուցումը Թիւրքիայի հետ վարուող հաշտութեան բանակցութիւնների ընթացքի մասին և կանգնած մնալով իր 1918 թ. փետր. 16 որոշման վրա ի մասին հաշտութեան պայմանների Թիւրքիայի հետ, բայց կամենալով հասնել պատուաւոր հաշտութեան՝ ընդունելի Անդրկովկասի և Թիւրքիայի համար, Սէյմը վճռում է. տալ հաշտարար պատուիրակութեան նախագահ և Անդրկովկասի արտաքին գործոց նախարար Ա. Ի. Չխենկելիին արտակարգ լիազօրութիւններ՝ ինքնուրոյն կերպով այդ ուղղութեամբ անհրաժեշտ քայլեր անելու համար»:

Այս լիազօրութիւնը անմիջապէս ուղարկուեց Տրապիզոն: